ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 օգոստոսի 2016 թվականի թիվ 108-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի դեկտեմբերի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2016 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին>> թիվ 218-Ա որոշման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Իմ ղեկավարությամբ ՀՀ Տավուշի մարզում 2016 թվականի հոկտեմբերի 20-ին անցկացնել հրամանատարաշտաբային ուսումնավարժություն (այսուհետ՝ ուսումնավարժություն) <<Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը ուժեղ երկրաշարժի դեպքում>> թեմայով:
2. Հաստատել.
   1) ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն հավելված 1-ի.
   2) ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Ուսումնավարժությունում ներգրավել.
   1) ՀՀ Տավուշի մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովին.
   2) ՀՀ Տավուշի մարզային տարահանման հանձնաժողովին.
   3) ՀՀ Տավուշի մարզպետարանի վարչություններին.

4) Իջևան, Գետահովիտ, Գանձաքար համայնքների ղեկավարներին.

5) ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչությանը (այսուհետ ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ).

6) ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչությանը.

7) «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի Իջևանի օդերևութաբանական կայանին.

8) <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ Տավուշի գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղին.

9) <<ՀԷՑ>> ՓԲԸ <<Աղստև>> մասնաճյուղին.

10) <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ <<հարավ-արևելյան>> մասնաճյուղի Իջևանի տեղամասին.

11) <<ԱրմենՏել>> ՓԲԸ հյուսիսային տարածքային կենտրոնի <<Տավուշ>> ուղղությանը.

12) ՀՀ ՊՆ թիվ 3 բանակային կորպուսի և զինկոմիսարիատների ներկայացուցիչներին.

13) «Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայություն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչներին.

4. ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, փրկարարական ծառայության գնդապետ Ա. Հովակիմյանին.

1) ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2016թ. սեպտեմբերի 15-ը ներկայացնել իմ հաստատմանը.

2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի.

3) ապահովել համագործակցությունը ուսումնավարժությանը ներգրավված մասնակիցների միջև.

4) ճշգրտել փոխգործողությունների պլանները.

5) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել մինչև 2016 թվականի հոկտեմբերի 17-ը:

5. ՈՒսումնավարժության մասնակիցներին.

1) ուսումնասիրել <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> ՀՀ օրենքը, <<ՈՒժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Տավուշի մարզի գործողությունների պլան>>-ը.

2) ճշգրտել համապատասխան պլանները.

3) պատրաստ վիճակի բերել ուժերն ու միջոցները, համալրել ստորաբաժանումները հաշվեցուցակային գույքով.

4) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

5) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին.

6) գործնական միջոցառումներ իրականացնելիս խստագույնս պահպանել անվտանգության կանոնները:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՄԱՐԶՊԵՏԻ Ժ/Պ Կ.ԱԴԱՄՅԱՆ

2016թ. օգոստոսի 19
Ք. Իջևան

Հավելված 1.
ՀՀ Տավուշի մարզպետի
2016թ. օգոստոսի 19 -ի
թիվ 108 Ա. որոշման

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ ԿԱԶՄ

Հ/Հ	Զբաղեցրած պաշտոնը ղեկավարման շտաբի կազմում	Պաշտոն, ազգանուն, անուն, հայրանուն
1	2	3
1	Շտաբի պետ	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ պետ, փ/ծ գնդապետ Հովակիմյան Արթուր Արարատի
2	Խաղարկման և վերլուծության խմբի ղեկավար	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի (այսուհետ ՃԿԿ) պետ-վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Փիրումյան Վահան Վլադիմիրի
3	Խաղարկման և վերլուծության խմբի անդամ	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ ՃԿԿ ավագ հրահանգիչ, փ/ծ կապիտան Ասիլյան Մելիք Էդիկի
4	Խաղարկման և վերլուծության խմբի անդամ	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ ՃԿԿ հրահանգիչ, փ/ծ լեյտենանտ Հովսեփյան Հրայր Վաղինակի
5	Միջնորդական խմբի ղեկավար	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի (այսուհետ ԲՊԲ) պետ-վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Աբազյան Վիկտոր Վարշամի
6	ՀՀ արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի, <<Գազպրոմ Արմենիա>> Տավուշի ԳԳՄ-ի, <<ՀԷՑ>> ՓԲԸ Աղստև մասնաճյուղի միջնորդ անդամ	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ ՃԿԿ օպերատիվ հերթապահ հերթափոխի ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր ՈՒլիխանյան Սամվել Միշայի
7	ՀՀ Տավուշի մարզի տարահանման հանձնաժողովի, ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության միջնորդ	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ ԲՊԲ ավագ հրահանգիչ, փ/ծ կապիտան Վարդապետյան Նարեկ Վահեի
8	ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության, <<ԱրմենՏել>> ՓԲԸ ՀՏԿ Տավուշի ուղղության, <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ <<հարավ-արևելյան>> մասնաճյուղի Իջևանի տեղամասի միջնորդ	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ ԲՊԲ հրահանգիչ, փ/ծ լեյտենանտ Մարկոսյան Սարգիս Իսկենդարի

1	2	3
9	ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության, առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունների միջնորդ	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ ՃԿԿ օպերատիվ հերթապահ հերթափոխի հրահանգիչ, փ/ծ լեյտենանտ Քամալյան Էդգար Սամվելի
10	Իջևան, Գետահովիտ, Գանձաքար համայնքների ղեկավարների միջնորդ	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ ԲՊԲ գլխավոր մասնագետ Մելքումյան Արմեն Նիկալի
11	Գործնական միջոցառումների կազմակերպման խմբի ղեկավար	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ Իջևանի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար, փ/ծ փոխգնդապետ Մելիքսեթյան Անդրանիկ Ռազմիկի
12	Գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ Նոյեմբերյանի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար, փ/ծ գնդապետ Հովսեփյան Վաղինակ Հովհաննեսի
13	Գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ Դիլիջանի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար, փ/ծ փոխգնդապետ Փիրումյան Կորյուն Արամայիսի
14	Գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ Նոյեմբերյանի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ, փ/ծ ավագ լեյտենանտ Ազատյան Հայկ Վարդանի
15	Գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ	ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ Դիլիջանի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ, փ/ծ լեյտենանտ Անանյան Ռոմանոս Լևոնի

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Դավթյան

Հավելված 2
ՀՀ Տավուշի մարզպետի
2016թ. օգոստոսի 19 -ի
թիվ 108 Ա որոշման

ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետները	Պատասխանատու կատարողներ	Նշ.կատարման մասին
1	2	3	4	5
	Փաստաթղթերի մշակում			
1.	Ելակետային տվյալների որոշում՝ վայր, մասնակիցների կազմ, մտահղացում, անցկացման կարգ	Մինչև 24.08	Ուսումնավարժության ղեկավար, ղեկավարման շտաբի պետ	
2.	ՀՇՈ մտահղացման մշակում սխեմայի տեսքով	Մինչև 29.08	Ղեկավարման շտաբ	
3.	ՀՇՈ մտահղացման բացատրագրի մշակում	Մինչև 29.08		
4.	ՀՇՈ անցկացման պլանի մշակում	Մինչև 01.09		
5.	ՀՇՈ իրավիճակի զարգացման պլանի մշակում			
6.	ՀՇՈՒ ղեկավարման կազ-մակերպման սխեմայի մշակում			
7.	ՀՇՈՒ գործնական միջոցառումների պլանի մշակում	Մինչև 02.09		
8.	ՀՇՈ անցկացման փաստաթղթերի ներկայացում հաստատման	Մինչև 15.09	Ղեկավարման շտաբի պետ	
9.	Միջնորդական կազմի անհատական պլանների մշակում և հաստատման ներկայացում	մինչև 20.09	Ղեկավարման շտաբի պետ, միջնորդական կազմ	
	Ղեկավար և միջնորդական կազմի նախապատրաստում			
10.	ՀՇՈՒ կազմակերպման և անցկաց-ման փաստաթղթերի ուսումնասի-րում	Մինչև 19.09	Ղեկավարման շտաբի պետ	
11.	Միջնորդների հրահանգավորում	Մինչև 14.10.	Միջնորդական խմբի ղեկավար	
12.	Կապի վարժանք	մինչև 13.10	Ղեկավարման շտաբի պետ	
	Ուսուցանվողների նախապատրաստումը			
13.	Ուսումնավարժության մասնակից-ներին նախապատրաստման ու անցկացման փաստաթղթերի հետ ծանոթացում իրենց առնչվող մասով:	Մինչև 22.09	Ղեկավարման շտաբ	

1	2	3	4	5
14.	<<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> ՀՀ օրենքի, <<ՈՒԺեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Տավուշի մարզի գործողությունների պլան>>-ի, ԱԻ ոլորտին առնչվող իրավական այլ ակտերի ուսումնասիրում	Մինչև 26.09	Ղեկավարման շտաբի պետ	
15.	ՀՇՈՒ-ին ընդգրկվող արձագանքող ուժերի հրամանատարների հետ վարժանքի անցկացում «Ստորաբաժանման ղեկավարումը աղետի գոտում» թեմայով	մինչև 30.09.	Ղեկավարման շտաբի պետ, գործնական միջոցառումների խմբի ղեկավար	
16.	Փոխհամագործակցության պլանների ճշգրտում	մինչև 30.09.	Ղեկավարման շտաբ, մարզի համապատասխան ծառայությունների պետեր	
17.	Անձնակազմին անվտանգության կանոնների հետ ծանոթացում	մինչև 14.10	Ստորաբաժանումների հրամանատարներ	
18.	Ուսումնավարժությանը ընդգրկվող տեխնիկայի վիճակի ստուգում:	մինչև 10.10	Ստորաբաժանումների հրամանատարներ	
19.	Ուսումնավարժության ընթացքում օգտագործվող կապի միջոցների նախապատրաստում	մինչև 12.10	Ղեկավարման շտաբ	
Ուսումնավարժության գործնական տեղամասերի նախապատրաստում				
20.	Գործնական միջոցառումների անցկացման վայրի տեղազննում	Մինչև 26.08	Ուսումնավարժության ղեկավար, ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ	
21.	Աշխատանքային տեղամասերի նախապատրաստում	Մինչև 15.10	Գործնական միջոցառումների կազմակերպման խումբ	
22.	Նմանակման համար անհրաժեշտ գույքի նախապատրաստում	Մինչև 15.10	Գործնական միջոցառումների կազմակերպման խումբ	

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Դավթյան